Նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 10 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի «Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցման նախագծում», «Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն», «Երևանի Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի պարասրահի հիմնանորոգում», «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Դրմբոն – Մեծ Շեն 4.8 կմ հատվածի կառուցման նախագծում», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի դպրոցի ամբողջական կահավորում» ծրագրերը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակույթային տան տանիքի հիմնանորոգում» ծրագիրը.

«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող «Պալիատիվ խնամքի փորձարկում» ենթադրմաշնորհային ծրագիրը.

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցության սիրիահայերին» ծրագիրը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «ՀՊՃՀ» պետական ոչ առևտրային կազմակերպության Կապանի մասնաճյուղի ուսումնական մասնաշենքի վերանորոգում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: